ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 16-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ԹԻՎ 31-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հունվարի 24-ի թիվ 2-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 31-Լ հրամանով հաստատված 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

17.02.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված 2
ՀՀ ներքին գործերի նախարարի
«17» փետրվարի 2025թ.
թիվ 16-Լ հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի, նրա տեղակալների, ենթակա պետական մարմինների ղեկավարների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման

1. **ՀՀ ներքին գործերի նախարար՝** յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա երրորդ օրը՝ ժամը 16:00-ից մինչև 18:00-ն

2. **ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ՝** յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա երրորդ օրը՝ ժամը 16:00-ից մինչև ժամը 18:00-ն

3. **ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ՝** յուրաքանչյուր ամսվա երկրորդ շաբաթվա հինգերորդ օրը՝ ժամը 16:00-ից մինչև 18:00-ն

4. **ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ՝** յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթվա երրորդ օրը՝ ժամը 16:00-ից մինչև 18:00-ն

5. **ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ՝** յուրաքանչյուր ամսվա երկրորդ շաբաթվա երրորդ օրը՝ ժամը 16:00-ից մինչև 18:00-ն (ընդունելությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության վարչական շենքում՝ ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա.Միկոյան 109/8)

6. **ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ՝** ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր աշխատանքային օր՝ աշխատանքային ժամերին (ընդունելությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի ծառայության վարչական շենքում՝ ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, 17/10)

7. **ՀՀ ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ՝** յուրաքանչյուր շաբաթվա երրորդ օրը՝ ժամը 14:00-ից մինչև 16:00-ն